ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՈՐ Ի ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ

Փառք ենք վերառաքում առ Բարձրեալն Աստուած, որ մեր ժողովրդի զաւակաց հոգիներում վառ են ազգային ու եկեղեցական մեր աւանդներն ու սրբութիւնները, եւ հաւատը նրանց կենդանի է գործերով:

Յարգարժան Դրն. Կարապետեան,

Գոհունակութեամբ տեղեկացանք Արմաւիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիսն եպիսկոպոս Ադամեանից ազգանպաստ ու եկեղեցանուէր Ձեր ձեռնարկումների մասին, որոնք բարեզարդում են Ձեր կեանքի ճանապարհը եւ յաւերժացնում Ձեր անունը՝ որպէս ազնիւ բարեգործը մեր Սուրբ Եկեղեցու: Հայրապետիս համար ուրախութիւն է անդրադառնալ, որ Դուք, լինելով Դոնի Ռոստով քաղաքի Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Խաչ եկեղեցիների խորհրդի անդամ, նաեւ առատաձեռն նուիրաբերութիւններով սատար էք կանգնում հայ համայնքի ազգային-եկեղեցական կեանքի առաջընթացին, նոր սերնդի հոգեւոր կրթութեան ու դաստիարակութեան կարեւոր առաքելութեանը:

Աստուածահաճոյ Ձեր գործունէութեան ընթացքում Ջանֆիդայ համայնքի Սուրբ Կարապետ եկեղեցին կառուցելու եւ յարակից տարածքը բարեկարգելու Ձեր ազնիւ յանձնառութիւնը մի նոր վկայութիւն է հայորդուդ գովարժան եկեղեցանուիրումի եւ աստուածսիրութեան: Մեծ նշանակութիւն պիտի ունենայ մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ սրտաբուխ բարերարութեամբ յառնած եկեղեցին, որն այսուհետ, իր դռները բացած հաւատացելոց առջեւ, նոր աշխուժութիւն պիտի բերի համայնքային հոգեւոր կեանքին: Շնորհիւ Ձեր եւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդեաց ազնիւ ջանքերի՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին բարուօք իրագործում է իր տէրունաւանդ առաքելութիւնը, եւ յաւելուում է շինութիւնն ու պայծառութիւնը Հայ Եկեղեցու:

Համայն հայոց մեր նուիրական սրբօրրանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջելով Արմաւիրի թեմի բարեջան առաջնորդի խնդրանքին՝ շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս ՈՒ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ մեր Տէրը, բարեխօսութեամբ առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մեր Հայրապետի, հանապազ օրհնութիւն բաշխի Ձեզ եւ Ամենախնամ Աջի ներքոյ երջանիկ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ շնորհելով յարանորոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Ապրիլի
Յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՌՆԿԳ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 846